

Համարը N 920-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 31.07.02./28(203) Հոդ.653
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.08.2002

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 11.05.2002
Ստորագրման ամսաթիվը 04.07.2002
Վավերացման ամսաթիվը 11.07.2002
Ուժը կորցնելու ամսաթիվը

Մայր փաստաթուղթ: [ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱ...](#)

Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը՝
[ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ Կ ... \(24.12.2005 - 08.07.2006\)](#)
[ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ Կ ... \(08.07.2006 -\)](#)

Համապատասխան ինկորպորացիան՝
[ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԴԻԼ ... \(24.12.2005 - 08.07.2006\)](#)
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԴԻԼ ... (08.07.2006 -)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԵՎ «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
11 հուլիսի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մայիսի 2002 թվականի N 920-Ն

«ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԵՎ «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.1. Հաստատել՝ ա) «Դիլիջան» ազգային պարկի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.բ) «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի:2. Սահմանել, որ՝ ա) «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակը՝ «Դիլիջան» ազգային պարկի տարածքի, բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է.բ) «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կենսաառևտրաների, այդ թվում՝ բույսերի ու կենդանիների տեսակների, անտառային ռեսուրսների վերարտադրություն, օգտագործում և իրացում, բնափայտի մթերում, վերամշակում և իրացում, զբոսաշրջության, այդ թվում՝ էկոզբոսաշրջության կազմակերպում, երկրորդական անտառանյութի

(կոճղերի) մթերում, վերամշակում և իրացում, կողմնակի անտառօգտագործում (խոտհունձ, անասունների արածեցում, փեթակների և մեղվանոցների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքում) և դրա արդյունքում մթերված կենսապաշարների վերամշակում ու իրացում, գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում և իրացում, հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում, «Դիլիջան» ազգային պարկին վերաբերող գովազդի կազմակերպում, գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստում ու հրատարակում, տեղեկատվության տրամադրում և խորհրդատվություն. գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի «Դիլիջան» ազգային պարկ կազմակերպելու մասին» N 165 որոշումն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ «Դիլիջան» պետական արգելոց» պետական հիմնարկի տնօրինության` պետական սեփականություն հանդիսացող գույքը, համաձայն NN 3 և 4 հավելվածների, բացառությամբ շենքերի և շինությունների, սեփականության իրավունքով հանձնվում է «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը. շենքերը և շինությունները, համաձայն N 5 հավելվածի, ինչպես նաև համապատասխան հողատարածքը` ըստ անտառաշինական նախագծերի, «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացվում են անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով. դ) մինչև վերակազմակերպումը «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը «Հայաստանի Հանրապետության 2002 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հատկացումները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տեղական գանձապետական բաժանմունք ներկայացված բյուջետային ծախսերի նախահաշիվների հիման վրա` ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների` դրանց տնտեսագիտական բովանդակությանը համապատասխան: Նշված հատկացումները ներառվում են վերակազմակերպումից հետո իրավաբանական անձի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրում: 3. «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «ե» և «է» ենթակետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը: 4. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին` ա) «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հաստատումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել կազմակերպության պետական գրանցումը. բ) «Դիլիջան» ազգային պարկի անտառաշինական և հողաշինարարական քարտեզների հիման վրա 1 տարվա ընթացքում` սահմանված կարգով ապահովել «Դիլիջան» ազգային պարկի տարածքի քարտեզագրումը, գոտիավորման սխեմայի կազմումը, պարկի ու դրա պահպանական գոտու սահմանների ճշտումը և, դրանք Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվելուց հետո, հողամասերի ու ամրացված այլ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը: 5. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին` մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ` ա) սահմանված կարգով` Հայաստանի Հանրապետության 1999-2001 թվականների պետական բյուջեների կատարման արդյունքներով «Դիլիջան» պետական արգելոց» պետական հիմնարկի ֆինանսավորման գծով առաջացած պարտքերը մարելու վերաբերյալ. բ) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հայտի հիման վրա` «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության ֆինանսավորման վերաբերյալ:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2002 թ. հուլիսի 4
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2002 թվականի
մայիսի 11-ի N 920-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Դիլիջան» ազգային պարկը (այսուհետ՝ պարկ) կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի «Դիլիջան» ազգային պարկ կազմակերպելու մասին» N 165 որոշմամբ՝ Հայկական ՄՍՌ Մինիստրների սովետի 1958 թվականի սեպտեմբերի 13-ի «Հայկական ՄՍՌ բնության պահպանության մասին» օրենքի կիրառման մասին» N 341 որոշմամբ կազմակերպված «Դիլիջան» պետական արգելոցի և դրան հարակից տարածքների սահմաններում: 2. Պարկի ստեղծման նպատակներն են՝ ա) Աղստև և Գետիկ գետերի ավազանների ջրային ու ցամաքային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի ապահովումը, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ու պատմամշակութային հուշարձանների պահպանությունը: բ) հյուսիսային Հայաստանին բնորոշ հազվագյուտ և անհետացող վայրի բույսերի ու կենդանիների տեսակների, գենոֆոնդի և դրանց ապրելու միջավայրի պահպանությունը: գ) բնական լանդշաֆտների, դրանց առանձին տարրերի, բնական գործընթացների և երևույթների գիտական ուսումնասիրությունը՝ ուղղված պարկի տարածքի բնական էկոհամակարգերում ընթացող գործընթացների կանխատեսմանն ու գնահատմանը, բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանմանը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ու բնության պահպանության գիտական հիմունքների մշակմանը, պարկին հարակից տարածքների համար բնության պահպանության և օգտագործման արդյունավետ ձևերի մշակման բազայի ապահովմանը: դ) էկոլոգիական դիտանցի կազմակերպման, բնության տարեգրության վարման և տարածաշրջանի բնության թանգարանի կազմակերպման բազայի ապահովումը: ե) գիտաճանաչողական զբոսաշրջության զարգացման նախադրյալների ապահովումը: զ) բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության համար համապատասխան նախադրյալների ապահովումը: 3. Պարկի տարածքում հողերի և դրա բնական պաշարների օգտագործումն ու պահպանությունը, ինչպես նաև քաղաքաշինական գործունեությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: 4. Պարկի տարածքը, համաձայն պարկի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, բաժանվում է հետևյալ տարածագործառնական գոտիների՝ ա) արգելոցային, բ) հանգստի (ռեկրեացիոն), գ) տնտեսական: 5. Պարկի անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «Դիլիջան» ազգային պարկ, հայերեն կրճատ՝ «Դիլիջան» ԱՊ, ռուսերեն լրիվ՝ Национальный парк «Дилижан», ռուսերեն կրճատ՝ НП «Дилижан», անգլերեն լրիվ՝ Dilijan National Park, անգլերեն կրճատ՝ Dilijan NP:

II. ՊԱՐԿԻ ՌԵԺԻՍԸ

6. Պարկի արգելոցային գոտում արգելվում են՝ ա) ջրային պաշարների շահագործումը և ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն: բ) տնտեսական և բնակելի օբյեկտների շինարարությունն ու շահագործումը, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և այլ հաղորդակցուղիների շինարարությունը (բացառությամբ պարկի արգելոցային գոտու գործունեության համար անհրաժեշտ օբյեկտների ու ճանապարհների շինարարության): գ) որսորդությունը, ձկնորսությունը, կենդանիների ապրելու միջավայրի և բնական պայմանների խախտումը: դ) կենդանիների և բույսերի առանձին տեսակների թվաքանակի ավելացման նպատակով կատարվող ցանկացած աշխատանք, ինչպես նաև նոր տեսակների ներմուծումը: ե) հավաքածուների ստեղծման նպատակով նյութերի հավաքումը (բացառությամբ պարկի արգելոցային գոտու տարածքի գիտական հետազոտությունների համար նախատեսված նյութերի): զ) վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի և հողերի պարարտացման նպատակով թունաքիմիկատների ու պարարտանյութերի օգտագործումը: է) երկրաբանահետախուզական աշխատանքները, որոնք ուղեկցվում են փորձնական հանույթներով, մակաբացումներով, պայթեցումներով և բնական միջավայրը խախտող այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ: բ) օգտակար հանածոների մշակումը, հողային ծածկույթի խախտումը, հանքաշերտերի, հանքելուստների և լեռնատեսակների էլքերի շահագործումը: թ) ծառահատումները, բույսերի, ծաղիկների ու սերմերի մթերումը, անասունների արածեցումը, խոտհունձը և բուսական ծածկույթի այլ խախտումներ: ժ)

մեքենայացված տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը՝ թույլատրված ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում: Ժա) ցանկացած այլ գործունեություն, որը խախտում է պարկի արգելոցային գոտու բնական էկոհամակարգերն ու օբյեկտները կամ վտանգում է գիտական ու մշակութային արժեք ներկայացնող օբյեկտների պահպանությունը: 7. Պարկի արգելոցային գոտու տարածք մուտքը թույլատրվում է՝ ա) գիտահետազոտական աշխատանքների կատարման, ինչպես նաև պարկի գործունեության հետ կապված պաշտոնական այցելությունների համար: Բ) զբոսաշրջության համար: 8. Արգելոցային գոտու տարածք մուտքը թույլատրվում է «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի կամ լիազորված պետական մարմնի կողմից տրված անցագրերով: 9. Պարկի հանգստի գոտու տարածքում արգելվում են՝ ա) հանգստի (ռեկրեացիայի) կազմակերպմանը չառնչվող արտադրական և այլ օբյեկտների շինարարությունն ու շահագործումը: Բ) երկրաբանահետախուզական աշխատանքները, որոնք ուղեկցվում են փորձնական հանույթներով, մակաբացումներով, պայթեցումներով և բնական միջավայրը խախտող այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ: Գ) օգտակար հանածոների մշակումը, հողային ծածկույթի խախտումը, հանքաշերտերի, հանքելուստների և լեռնատեսակների էլքերի շահագործումը: Դ) բույսերի և կենդանիների նոր տեսակների ներմուծումն ու կլիմայավարժեցումը: Ե) ոչ ռեկրեացիոն նպատակներով բնական պաշարների օգտագործումը: Զ) վնասատուների դեմ պայքարի ու հողերի պարարտացման նպատակով թունաքիմիկատների և պարարտանյութերի օգտագործումը: Է) մեքենայացված տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը՝ թույլատրված ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում: 10. Պարկի հանգստի գոտու տարածքում թույլատրվում են՝ ա) քաղաքացիների երկարատև և կարճատև հանգիստը: Բ) սիրողական և մարզական ձկնորսությունը՝ այդ նպատակով առանձնացված վայրերում: Գ) ռեկրեացիայի նպատակով հողերը սահմանված կարգով վարձակալության տրամադրելը: Դ) սանիտարական և խնամքի ծառահատումները: Ե) մարդու գործունեության հետևանքով պարկի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող երևույթներն ու գործընթացները կանխարգելող, ինչպես նաև խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումները: Զ) սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման ու վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման միջոցառումները: Է) տրանսպորտային միջոցների մուտքն ու կանգառը՝ այդ նպատակով առանձնացված վայրերում: Ը) վրանների տեղադրումը, խարույկ վառելը և ռեկրեացիայի հետ կապված այլ գործողություններ՝ դրանց համար առանձնացված վայրերում: 11. Պարկի տնտեսական գոտու տարածքում արգելվում են՝ ա) պարկի գործունեությանը չառնչվող արտադրական և այլ օբյեկտների շինարարությունն ու շահագործումը: Բ) երկրաբանահետախուզական աշխատանքները, որոնք ուղեկցվում են փորձնական հանույթներով, մակաբացումներով, պայթեցումներով և բնական միջավայրը խախտող այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ: Գ) օգտակար հանածոների մշակումը, հողային ծածկույթի խախտումը, հանքաշերտերի, հանքելուստների և լեռնատեսակների էլքերի շահագործումը: Դ) բույսերի և կենդանիների նոր տեսակների ներմուծումն ու կլիմայավարժեցումը: Ե) վնասատուների դեմ պայքարի նպատակով քիմիական թունանյութերի օգտագործումը: 12. Պարկի տնտեսական գոտու տարածքում թույլատրվում են՝ ա) ռեկրեացիոն սպասարկմանը նպաստող՝ էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արտադրության կազմակերպման նպատակով հողերը վարձակալության տրամադրելը: Բ) օրգանական պարարտանյութերի և կենսաբանական ծագում ունեցող պայքարի միջոցների օգտագործումը: Գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրային, բուսական և կենդանական ռեսուրսների օգտագործումը, այդ թվում՝ արդյունագործական ձկնորսությունը: Դ) էկոլոգիապես մաքուր՝ ազգային արհեստագործական արտադրությունների կազմակերպումը: Ե) զբոսաշրջությունը: Զ) սանիտարական և խնամքի ծառահատումները: Է) տրանսպորտային միջոցների երթևեկությունն ընդհանուր օգտագործման ճանապարհներով և ջրային ուղիներով:

III. ՊԱՐԿԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

13. Պարկի պահպանությունն իրականացնում է «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

IV. ՊԱՐԿԻ ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆ

14. Պարկի պահպանական գոտին ընդգրկում է պարկին հատկացված տարածքում Աղստև և Գետիկ գետերի ջրհավաք ավազանների ջրբաժանային գծերով սահմանափակված տարածքը: Պահպանական գոտու տարածքում կարող են ընդգրկվել տարբեր սեփականատերերի պատկանող հողամասեր, այդ թվում՝ համայնքների վարչական տարածքներում ներառվածը: Դրանց օգտագործումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: 15. Պարկի պահպանական գոտու տարածքում թույլատրվում է պարկի էկոլոգիական համակարգին և դրա բնականոն զարգացմանը չվնասող՝ լիազորված պետական մարմնի հետ համաձայնեցված ցանկացած տնտեսական գործունեություն:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան